ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 հուլիսի 2026 թվականի N 321- Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 26-ի «Բուսաբուծության աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 384-Լ որոշման 21-րդ կետը,

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում բուսաբուծության աջակցության ծրագրով ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում բուսաբուծության աջակցության ծրագրով ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու արդյունքում կազմվող արձանագրության ձևը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Աշխատանքային խմբին՝

ա) տվյալ համայնքի կողմից մոնիթորինգ իրականացնելուց հետո, բայց ոչ ուշ քան բերքահավաքը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ ապահովել ընդգրկված շահառուների առնվազն քսան տոկոսի ընտրանքային մոնիթորինգի իրականացումն, այդ թվում՝ բուսաբուծության աջակցության ու այլ փաստաթղթերի ուսումնասիրություն և արձագրության կազմում:

բ) մոնիթորինգն իրականացնելուց հետո առավելագույնը մեկ ամսվա ընթացքում

մարզպետին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

2026-07-03 18:28:06 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2026 թ. հուլիսի 3
ք. Կապան

Հավելված N
ՀՀ Սյունիքի մարզպետի
2026թ. հուլիսի 3-ի N [illegible] որոշման

Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում բուսաբուծության աջակցության ծրագրով ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի

Ա. Նահապետյան	-	Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ, հանձնաժողովի նախագահ
Է. Բունիաթյան	-	Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
Գ. Դավթյան	-	Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
Ս□ Իվանյան	-	ՀՀ ԷՆ բուսասանիտարիայի և ագրոքիմիական հետազոտությունների բաժնի Սյունիքի մարզի ագրոնոմ

2026-07-03 18:21:51 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2026թ. հուլիսի 3-ի N 321-Լ որոշման

Արձանագրություն

ՀՀ կառավարության 26 մարտի 2026 թվականի N 384-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում բուսաբուծության աջակցության ծրագրի՝ ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից իրականացված ընտրանքային մոնիթորինգի

Համայնք՝ _____, Բնակավայր՝ _____

Շահառու՝ _____-ի

Ցանքատարածության մակերեսը՝ _____հա

Ցանքսը կատարված է՝ **(մշակաբույսի անվանումը)** _____

☐ հավաստագրված սերմացուով

Մոնիթորինգի եզրակացությունը՝ (Համապատասխան վանդակում կատարել V-աձև գրառում)

ԴՐԱԿԱՆ ☐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ☐

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Նահապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Է. Բունիաթյան

_____ Գ. Դավթյան

_____ Ս. Իվանյան

2026-07-03 12:33:47 GMT+04:00
Հավաստված էլեկտրոնային կնիքով

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյան